



### ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 3

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

### ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արսեն Կարապետյանը (այսուհետ՝ նաև Հայցվոր) 01.06.2018 թվականին հայցադիմում է ներկայացնում դատարան՝ պահանջելով Ռոբերտ Մարտիրոսյանից (այսուհետ՝ նաև Պատասխանող) բռնազանձել 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ՝ որպես նրանց միջև 10.01.2017 թվականին կնքված ավտոմեքենայի առովաճառքի պայմանագրով (այսուհետ՝ նաև Պայմանագիր) նախատեսված ապրանքի գին, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ՝ սկսած 01.06.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարումը: Հայցվորը հայցի հիմքում դնում է Պատասխանողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունը կատարած չլինելու հանգամանքը:

Հայցվորը հայցադիմումին կից ներկայացնում է նոտարական կարգով վավերացրած Պայմանագրի բնօրինակը, որի համաձայն՝ Արսեն Կարապետյանը պարտավորվում է Ռոբերտ Մարտիրոսյանին որպես սեփականություն հանձնել «Mercedes-Benz CLS» մակնիշի ավտոմեքենան (այսուհետ՝ նաև Ավտոմեքենա), իսկ Ռոբերտ Մարտիրոսյանը պարտավորվում է ընդունել այն և դրա համար 01.06.2017 թվականին վճարել 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: Ի թիվս այլ փաստաթղթերի՝ Հայցվորը հայցադիմումին կից ներկայացնում է նաև 67.200 (վաթսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ պետական տուրք (որից 60.000 ՀՀ դրամը որպես Պայմանագրի գնի՝ 3.000.000 ՀՀ դրամի 2 տոկոս, իսկ 7.200 ՀՀ դրամը որպես 01.06.2017-01.06.2018 թթ. հաշվարկված տոկոսների՝ 360.000 ՀՀ դրամի 2 տոկոս) վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պահանջվող գումարի հաշվարկը:

Դատարանը (դատավոր Ա.Արմենակյան), ուսումնասիրելով հայցադիմումն ու կից փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 9-րդ մասը և այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմումին կից չի ներկայացրել 01.06.2018 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման պահին ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվող տոկոսների մասով պետական տուրքը վճարած լինելը հավաստող ապացույց կամ պետական տուրքի վճարման արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդություն, որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ:

Հայցվորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան): Վերաքննիչ դատարանը, քննելով բողոքը և հիմնավոր համարելով դատարանի կողմից պետական տուրքն ամբողջությամբ վճարած չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշումը, կայացնում է վերաքննիչ բողոքը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ որոշում:

Հայցվորը Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ բողոք է ներկայացնում ՀՀ Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում սույն վճռաբեկ բողոքը ներկայացվել է Վերաքննիչ դատարանի այնպիսի ակտի դեմ, որի համար բողոքարկման դեպք և կարգ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, որոշում է կայացնում բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ:



Արսեն Կարապետյանը 01.02.2019 թվականին կրկին հայցադիմում է ներկայացնում դատարան, նույն պահանջով, նույն հիմքով և հիմնավորումներով, ինչ ներկայացրել էր 01.06.2018 թվականին: Ի թիվս այլ անհրաժեշտ փաստաթղթերի, այդ թվում՝ Պայմանագրի բնօրինակի, Հայցվորը ներկայացնում է նաև 72.033 ՀՀ դրամ պետական տուրք (որից 60.000 ՀՀ դրամը որպես Պայմանագրի գնի՝ 3.000.000 ՀՀ դրամի 2 տոկոս, իսկ 12.033 ՀՀ դրամը որպես 01.06.2017-01.02.2019 թվականը հաշվարկված տոկոսների՝ 601.650 ՀՀ դրամի, 2 տոկոս) վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պահանջվող գումարի հաշվարկը:

Դատարանը (դատավոր Բ.Բագրատյան), համարելով որ չկան հայցադիմումը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր, որոշում է կայացնում հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ (թիվ ԵԴ/11111/02/19 քաղաքացիական գործ):

Առաջին նախնական դատական նիստում Հայցվորը պնդում է իր պահանջը, իսկ Պատասխանողը առարկում է հայցի դեմ այն պատճառաբանությամբ, որ ինքը, Հայցվորից 10.01.2017 թվականին ընդունել է Ավտոմեքենան, գրանցել է դրա նկատմամբ իր սեփականության իրավունքը և Պայմանագրով նախատեսված ժամկետում ամբողջությամբ վճարել է 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամը: Պատասխանողը ներկայացնում է Ավտոմեքենայի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցած լինելը հավաստող ապացույց:

Նույն նախնական դատական նիստում դատարանը որոշում է կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ: Այդ որոշմամբ դատարանը Հայցվորի վրա պարտականություն է դնում ապացուցել Ավտոմեքենան Պատասխանողին հանձնած լինելու և Պատասխանողի կողմից Պայմանագրի գինը վճարած չլինելու փաստերը:

Դատարանը, դատաքննության ընթացքում հետազոտելով կողմերի ներկայացրած բոլոր ապացույցները, 10.06.2019 թվականին վճիռ է կայացնում հայցը բավարարելու վերաբերյալ: Դատական ծախսերի հարցը լուծելիս՝ դատարանը Պատասխանողի վրա պարտականություն է դնում վճարել նաև պետական տուրք՝ 01.02.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման պահին ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված տոկոսների մասով:

Ռոբերտ Մարտիրոսյանը 11.09.2019 թվականին հայցադիմում է ներկայացնում դատարան՝ պահանջելով իր և Արսեն Կարապետյանի միջև 10.01.2017 թվականին կնքված Ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչել և այդ պայմանագրի՝ որպես շինծու գործարքի նկատմամբ կիրառել գործարքին վերաբերող այն կանոնները, որոնք կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս, այն է՝ 10.01.2017 թվականին կնքված Ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը ճանաչել որպես իրականում իր և Արսեն Կարապետյանի միջև կնքված Ավտոմեքենայի նվիրատվության պայմանագիր, և հետ բռնագանձել 10.06.2019 թվականին թիվ ԵԴ/11111/02/19 քաղաքացիական գործի շրջանակում դատարանի կայացրած վճռի հիման վրա իրենից հարկադիր կարգով բռնագանձված գումարը: Ի թիվս այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ Ռոբերտ Մարտիրոսյանը հայցադիմումին կից ներկայացնում է նաև 10.06.2019 թվականին թիվ ԵԴ/11111/02/19 քաղաքացիական գործով դատարանի կայացրած վճիռը և գումարը իրենից հարկադիր կարգով բռնագանձված լինելը հավաստող ապացույց:

Դատարանը (դատավոր Ս.Սարյան), որոշում է կայացնում հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ:

Առաջին նախնական դատական նիստում Ռոբերտ Մարտիրոսյանը պնդում է իր պահանջը, իսկ Արսեն Կարապետյանը առարկում է հայցի դեմ՝ նշելով, որ իրենք իրականում կնքել և նկատի են ունեցել կնքել հենց առուվաճառքի պայմանագիր, որի մասին ունեցել են նախապես ձեռքբերված համաձայնություն:



Նույն նախնական դատական նիստում դատարանը որոշում է կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ, որով Ռոբերտ Մարտիրոսյանի վրա պարտականություն է դնում օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայության և գումարը իրենից հարկադիր կարգով բռնագանձված լինելու փաստերը ապացուցելու պարտականությունը, իսկ Արսեն Կարապետյանի վրա պարտականություն է դնում ապացուցել իրականում առուվաճառքի պայմանագիր կնքելու կամարտահայտությամբ Պայմանագիրը կնքած լինելու փաստը և կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները այլ գործարքով քողարկելու նպատակի բացակայությունը:

Դատարանը, դատաքննության ընթացքում հետազոտելով կողմերի ներկայացրած բոլոր ապացույցները, վճիռ է կայացնում հայցը բավարարելու վերաբերյալ:

## ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

### Հարցադրում 1.

*Հիմնավո՞ր են արդյոք դատարանի՝ ի դեմս դատավոր Ա.Արմենակյանի կողմից հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ և Վերաքննիչ դատարանի կողմից այդ որոշման բողոքարկման արդյունքում կյացրած որոշումները: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 2.

*Հիմնավո՞ր է արդյոք Վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ կայացրած որոշումը: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 3.

*Ըստ խնդրում ներկայացրած տվյալների՝ կա՞ն արդյոք դատավարական նորմի խախտումներ դատարանի՝ ի դեմս դատավոր Բ.Բագրատյանի գործողություններում: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 4.

*Ըստ խնդրում ներկայացրած տվյալների՝ հիմնավո՞ր է արդյոք դատարանի՝ ի դեմս դատավոր Ս.Սարյանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 5.

*Ճի՞շտ է որոշվել արդյոք ապացուցման ենթակա փաստերի շրջանակը և ճի՞շտ է բաշխվել արդյոք ապացուցման պարտականությունը Դատարանի՝ ի դեմս դատավոր Ս.Սարյանի կողմից: Հիմնավորե՞ք պատասխանը:*